

# Հ Ա Չ Ա Վ

## ՊՈՏՈՍԹԻՆ ԻՍԽՐԻՆ

Սուլթանը հարցնում է թե՛ «ինչից են գծգո՛հ հայերը»։  
Տարօրինակ ու միամիտ հարց։

Հայ ժողովրդի միլիոնատոս երկրագործական դասը, որ իր քրտինքով ու արիւնով է արդիւնարեւում իր հողը, ազում է ազանաբար ու լիապէս օգտվել իր ձեռքի ար գիւնքով։ — Իսկ թիւրք կառավարութիւնը նրա իւրաքանչիւր կատար հողից, նրա իւրաքանչիւր արդիւնքից տանական անգամ անկանոն ու ահագին հարկեր է վերցնում, գրկում է ժողովրդին իր գոյութիւնը պահպանելու բոլոր կարելիութիւնից, ստիպում գիւղացիներին թողնել ամբողջ գիւղեր ու իրենց հողերը և նախածուր համարել պանդխտութեան թշուառութիւնները, պրեթէ սովամահ լինել, քան հայրենիքում կամուրջ-կամուրջ մաշվելով ու քայքայվելով իրենց ճշտորենի համար սեփական ոյժից վեր աշխատելն ու շարշարվելը։

Հայ ժողովրդի նոյն միլիոնատոս երկրագործական խաղաղասէր դասն ուզում է ունենալ սպառնալից սեփական բնակարաններում ու գիւղերում։ Նա ուզում է, որ լայն օրով դիմված ձեռքը քարուքանդ չանէ իր գիւղերը, որ չխէ իրենից իր բնաւանական գծում պահեստի ամենավերջին պատառը, որ չոչնչացնէ իր արտերն ու բոլոր կայքը, որ չանարգէ ու չբռնարարէ իր կիներին ու գուռակներին, որ չսպանէ նոյն իրեն թայց ինչ խաղաղ խեղդելու համար հայ ժողովրդի մէջ ազգային կեանքի աճին նայլ, նրան միշտ աղքատութեան ու կիսավայրենի դրութեան մէջ պահելու նպատակով, իրրե ամենամեծ պաշտպան ու ողորմելի արարածի նրան միշտ իր գոյութեան համար գողացնել տալու գիտաւորութեամբ։ — Թիւրք կառավարութիւնը գիւղում այլացեղներին իրաւունք է տալիս լիապէս թագաւորել հայ շէներում, նոյն իրեն հային գրկելով մինչև իսկ անձնապաշտպանութեան իրաւունքից։

Հայ ժողովրդի ու հասարակութեան մէջ գոյութիւն ունի և զարգանում է ձգտում գէպի հասարակական կեանքի լուսաւորութիւն ու գէպի տնտեսական առաջագիտութիւն։ — Իսկ թիւրք կառավարութիւնը փակում է նրա ուսումնարանները, խտուրթեմբ հալածում հասարակական գիտակցութեան իւրաքանչիւր երևոյթ, ճնշում է ամեն առեւտրականութիւն՝ որ մինչև անգամ անսպասելիորդական փոքր ի շատ յարմար ու կանոնաւոր

ւոր յարաբերութիւնից գուրկ է, արգելում ամենայն տնտեսականութիւն մեր հասարակական կեանքի որ և է շաղթում, որ և է շրջանում։

Հայ ժողովուրդը պահանջում է յարգանք գէպի իր հաւատք, պահանջում է շխտանվել հայոց կրօնական գործերում։ — Իսկ թիւրք կառավարութիւնն ամեն-մի քայլ ափոխում ճնշում է գործում նրա խղճի վրայ, հալածում ամենաարժանաւոր հայ հոգևորականներին, իրրե քաղաքական յանցաւորներին, իսկ պատրիարքին ու բարձրաստիճան հոգևորականութեան դարձում իր խաղաղիքը մի և նոյն ժամանակ նրանց գրկելով իրենց ունեցած ազգատիկ արտօնութիւններից։

Մի խօսքով թիւրք կառավարութիւնն իր կոպիտ բռնապետութեան երկաթէ զուկները խրել է հայ ժողովրդի վիրաւոր ու շարշարված մարմնի մէջ և որպէս արիւնոտ ու կատաղի զազան, ձգում է նրանից ամբողջ հիւթն ու արիւնը, ձգնում իր կոպիտ գրկի մէջ բոլորովին խեղդել այն թշուառ գոշին... Եւ այդ ամենից յետ դեռ թիւրքերի պետը հարցնում է թե՛ «ինչից են գծգո՛հ հայերը»... Չարամիտ, անխիղճ հեգնութիւն... մեր շարշարանքի ու մեր խոնարհ լուրթեան ճուրհով վաստակած նախատինք...։

Բայց մենք էլ մեր կողմից կտանք սուլթանին հետեւեալ հարցերը, իրրե պատասխան նրա հարցին։ — Արդեօք կարո՞ղ են սուլթանն ու թիւրք կառավարութիւնը, շինելով այնպէս, ինչպէս այսօր են իրենք, մեզ հետ վարվել ուրիշ կերպ, քան այնպէս, որպէս մինչ այժմ վարվել են։

Արդեօք կարո՞ղ է թիւրք կառավարութիւնը շխտաւոր կել մեր ամենավերջին ասեղը, հազարաւոր բնակիչներին յանձնելով քաղցին, աղքատութեան ու պանդխտութեան աղէտներին, երբ նոյն ինքը պարտաւոր է վճարել իր պատերազմական պարտքերը, պարտաւոր է գտնվել սարսափելի տնտեսական անկման մէջ, քանի որ մի և նոյն ժամանակ ամբողջ թիւրք ժողովուրդը փողում է ափական ծուլութեան, վայրենութեան ու աղքատութեան մէջ։

Արդեօք նա կարո՞ղ է, չունենալով նպատակայարմար, լաւ քաղաքական, մինչև իսկ վարչական (administratif) կազմակերպութիւն, չունենալով մինչև անգամ կազմակերպված զօրքի ճշգրիտ քանակութիւն և ոչ էլ միջոց նրան կազմակերպելու և այդպէս գտնվելով ծայրահեղ անկարգութեան ու աղքատութեան մէջ, — արդեօք կարո՞ղ է

բաւականութիւն տալ մեր պահանջներին, չխեղտել մեզ ահագին հարկերի տակ, բռնութեամբ չդարձնել մեզի իրեն միակ կերակրողը և չյարձակեցնել տալ մեր վրայ վայրենի ցեղերին, լիտալէս յանձնելով նրանց կամ մեզին մեր հողերը, մեր կայքը, մեր պատիւը, մեր կեանքը:

Արդեօք կարո՞ղ է Թուրքիան, լինելով կիսավայրենի և գտնվելով քաղաքական ու տնտեսական լիակատար քայքայման վիճակում, սառնարիւն կերպով նայել մեր ձգտման վրայ դէպի հասարակական ու տնտեսական դարգացում և չվախենալ չերկնել որ հայ ժողովուրդն այդպիսի ձգտում ունենալով վաղ թէ ուշ կառավարութեան դէմ կներկայացնէ ընդդիմադրական լուրջ զորութիւն, որի միակ ջանքը կլինի գուրս նետովել Թուրքիայի անհրաժեշտ, կոպիտ, ճշտող գրկից:

Կարծում ենք առաջ բերելով այդ հարցերը՝ մենք ըստիպված կլինենք բոլորին էլ միանգամայն բացասական պատասխան տալ:

Եւ միթէ մեր աօրեայ կեանքի փաստերն այդ չեն հաստատում: Միթէ Թուրք կառավարութիւնն արդէն բաւականաչափ չէ հաստատել իր խոտամնադանցութիւնը շատ կէտերում և նմանապէս գտնէ նոյն իսկ 61-դ յօդուածի վերաբերութեամբ: Եւ վերջապէս միթէ մեզ համար գաղտնիք է այն հանրահռչակ փաստը, որ Հէնց նոյն քաղաքական ու տնտեսական պայմանները, որոնց մէջ Թուրքիան բռնութեամբ սեղմում ու պահպանում է իրեն հպատակ ժողովուրդներին, նոյն իրեն Թուրքիային կորստի ուղիին մատնեցին. — այն պայմանները նրան հասցրին անկման վճին և դարձրին նրան խաղաղիք երբ պակաս դիպլոմատների ձեռքին...

Բայց ո՞ր մեզ, ճնշված ստրուկներին, մտածել մեր տիրոջ ճակատագրի վրայ՝ մեզ, որոնց նա սեղմում է, որ պէս ետնեալ որդերի, իր ոսկեգօծ կրունկների տակ մեզ, որոնց նրա կամքով վիճակված է յոյս աշխարհում անտուն, անտէր Թափառել, հիւրասէր ազատտան մուրալով: մեզ, որ Թափելով վերջին կաթիլները մեր քրտինքի, արցունքի ու արիւնի, պարտաւոր ենք գրկել մեր գաւակի բերանից յետին պատառը քեզ, բռնապետ, կերպ կրկու համար... Մենք պէտք է մտածենք մեր ճակատագրի, մեր փրկութեան վրայ: Մենք գիտենք, որ մեր փրկութեան համար անհրաժեշտ է զատել մեր ճակատագրի Թուրքիայի ճակատագրից, որ մեզ անհրաժեշտ է լինել ինքնուրոյն ու ազատ, որ մեզ անհրաժեշտ է ունենալ սեփական ինքնավարութիւն, որը կրացէ մեր գէպի առաջադիմութիւն ու զարգացում ունեցած ձգտումների համար բաց սահման և խողով ու անարգել ճանապարհ:

Եւ միայն այն ժամանակ, երբ մենք կլինենք ինքնուրոյն ու ազատ, երբ մենք կունենանք ընդարձակ ու յոյն ընդհանուր և տեղական ինքնավարութիւն և այդպիսով զտտած կլինենք մեզի Թուրքիայից, երբ մեր քաղաքներում ազատ կերպով կընտրվեն ժողովրդական ներկայացուցիչներ, երբ դրանք կարող կլինեն ապահով ու ազատ կերպով քննել ու կանոնադրել իրենց հայրենիքի գործերը. երբ դրանց կյանքն կյանքն օրէնսդրական իրաւունքն ու զօրութիւնը. — միայն այն ժամանակ արդէն սոյն ժամանակ արդէն կեն ղէն նոյն իրեն հայ ժողովրդի շրթներով սուլթանը կիմանայ թէ ինչից է նա դժգոհ և ինչ է նա ուզում:

Իսկ հայ ժողովրդի իղձը, պատմութեամբ ու նրա կեանքի հանգամանքներով պատրաստված պահանջներն են հետեւեալները. —

1) Մշտական ժողովրդական ներկայացուցչութիւն, Ռբէնտիր Ժողով, որ կընտրվէ ազատ կերպով ընդհանուր քուէարկութեամբ, պատուէրներով հանդերձ քուէարկողների կողմից և որ կունենայ լիակատար իրաւունք ազգային կառավարչական բոլոր հարցերում:

ա) Ժողովրդական ներկայացուցիչներ ընտրվում են ամեն գաւակարդից և համեմատ բնակիչների քանակութեամբ:

բ) Ռբէնտիր Ժողովի հաստատութեան տեղը պէտք է լինի Հայաստանի նշանաւոր քաղաքներից մէկը:

2) Հայաստանում նահանգական ընդարձակ ինքնավարութիւն:

3) Մամուլի, խօսքի, խղճի, գուժարման, ընկերութիւնների և ընտրողական ազդեցութեան տղաւորութիւն:

4) Քննութիւն ժողովրդի ամբողջ տնտեսական կեանքի պայմանների և կերպարանափոխել ու կանոնադրել նրանց ժողովրդի ցանկութիւնների, ձգտումների ու պահանջների համեմատ:

5) Ամեն անձն ու բնակարան պիտի լինեն անձեռնմխելի:

6) Ազգային միլիցիա և զէնք կրելու ազատութիւն:

Մեր յօդուածում սուլթանին ներկայացնելով հայ ժողովրդի դժգոհութիւնը, ցանկութիւնները, ձգտումները, մենք պարտաւոր ենք դրան կից շօշափել մեր կեանքում յայտնվող և այն երևոյթք, որ հանդիսանում է իբրև արտայայտութիւն ժողովրդի նոյն դժգոհութեան, նոյն իղձերի, նոյն ձգտումների: Այդ երևոյթն է՝ այն շարժում ու յուզումները, որ սկսել են երևան գալ մեր կեանքում: Եւ բնաւ չի պիտի կարծել, որ անհատներն են այդպիսի շփոթութիւնների, յուզումների զրգարող, յարուցանողը, ստեղծողը, — ոչ, և ոչ էլ օտար տէրութիւնները: Մենք հասնելը չեն այդպիսի շարժումների ստեղծողը և չեն էլ կարող լինել: Գրանց ստեղծում են հանգամանքները, երկրի քաղաքական ու սոցիալ-տնտեսական ծանր պայմանները, դրանց ստեղծում է հայ ժողովրդի անբաւականութիւնը, նրա փափագն ու ձգտումը դէպի նոր կեանք և իր ընդհանուր կառութեան կերպերի արմատական կերպարանափոխութիւն: Առանձին անձերի բողբոջ փորձերը, նրանց յեղափոխական պրօպագանդան, նրանց պատրաստակամութիւնը նեղակալ կենդանի գործի յորձանքը — դրանք լոկ մասնաւոր արտայայտութիւններն են ընդհանուր տրամադրութեան ու սգույ. դրանք լոկ սկիզբներն են այն հանրային շարժման, որ ինքն բնա ինքեան, բնական կերպով և թիւրք կառավարութեան փորձի շարժով պատրաստվում ու զարգանում է հայ ժողովրդի մէջ, նրա խորճիթների անկիւններում, հայ սամկի

արտում կը ոչինչ չէ կարող առաջն առնել այդ բնական երևոյթի ամսանքը, — ոչ ճնշումները, ոչ հարածումները, ոչ բռնութիւնները, ոչ բանալը, ոչ աքսորը: Առանձին անձերին, մեղաւորին ու անմեղին, կառավարութիւնը կհաւածէ, կաքսորէ, կոչնչացնէ, բայց ընդհանրութեան հետ այդպէս վարվել չէ կարող. յեղափոխական առաջին ջրնջված շարքերից յետոյ առաջ կդան նորերը և դարձեալ նորերը՝ աւելի յանդուգն, աւելի կորովի, աւելի խիստ սպառնական ոգով բռնաւորի դէմ և կառավարութիւնն իր բարբարոս խառութիւնների ջանասէր առաջադիմութեամբ կհաննէ այն օրին, երբ նրա յանդիման խորխուս բար կանգնած կլինեն ժողովրդային սպառնացող լեզի աններ . . . .

**ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ**

„L'Arménie, les Arméniens et les traite's", par M. G. ROLIN - JAEQUEMINS. Avocat, ancien Ministre, Président de l'Institut de droit international.

Սոյն վերնագրով մէկ ընդարձակ ու լուրջ և հայերի վերաբերութեամբ համակրական յօդուած հրատարակվեցաւ „Revue de droit international” (Հանդէս միջազգային իրաւունքի) հեղինակութիւն ունեցող ամսագրի 1887 թ. № 3-ի մէջ: Հէնց իր առաջին տողերից հեղինակն ասում է, որ իր գրուածի „նախառակն է լինել օգտաւէտ, յայտնելով զայիք յուզումների ու խառնակութիւնների պատճառները:” Նա կարծում է, որ „այդ պատճառները կամ կարելի է հեռացնել և կամ մեղմացնել, եթէ եւրոպական զեկավարող տէրութիւններն իրենց առաջնորդ ընդունէին միջազգային արդարութեան կանոնները և զաշնագրութիւնների ուշիմ գործադրութիւնը:” Հեղինակի խօսքը Հայաստանի և հայերի անկանոն գրութեան մասին է: Նա գրաւ վրայ է դարձում Եւրոպայի ուշադրութիւնը „թէպէտ, յիշուի, — օրումն խնդիրների կարգում չկայ այժմ հայկական այրող խնդիր և մինչև իսկ կարելի է ասել, որ եւրոպական նախարարութիւնները չեն ուզում այնքան խառն խնդիրների վրայ մի նորն էլ տակնայնել, բայց դեռ թարմ օրինակներն ազատցնին, որ նախարարութիւնները չեն Արևելքում նպատակութիւն ստեղծում և նրանցից չէ կախված այն տեղի անցքերը կարգողը, և կամ անուշադիր թողնելով դրանց ընթացքը կանգնեցնել:” Հեղինակը շարունակում է իր խօսքը, բացատրելով, որ „Երբին գաշնագրութեան 61-րդ յօդուածն արդէն մտել է միջազգային դրական իրաւունքի շրջանը, որ նա մտել է իբրև տրամաբանական հետևանք նախնիքայ անցքերի ու կրողութիւնների և որ գոյն տրամաբանութիւնն իսկ այսօր պահանջում է 61-րդ յօդուածի գործադրութիւնը:” Հակառակ գէտքում նա գրեթէ անխուսափելի է համարում հայոց խնդրի նայն կերպարանքն ըն-

դունելը, ինչ կերպարանք ունեցան լուծանական խընդիրը, սերբական խնդիրը, բուլղարական խնդիրը, բուլղարական խնդիրը: Այս կէտերի վրայ մենք հարկաւոր ենք համարում փոքրինչ կանգ առնել Մենք համաձայն ենք յարգելի հեղինակի այն մտքի հետ, որ իրերի ներկայ գրութիւնը Հայաստանում ուշ կամ վաղ կարող է այնպիսի գոյն ու հոտանք ընդունել, ինչ եղաւ Բուլղարիայում, Բուլղարիայում և այլն: Սակայն 61-րդ յօդուածի գործադրութիւնն արդեօք կարող կլինի գոնէ մեղմացնել վերոյիշած կերպարանքի էութիւնը, ինչպէս կարծում է հեղինակը: Ճիշտ է որ 61-րդ յօդուածի գործադրութիւնը կարող է ժամանակաւորապէս թմրացնել հայերի իսկական իղձերն ու պահանջները և դրանց արտայայտութեան կերպն ու ոգին մեղմացնել, բայց արդեօք դա կլինի՞ տեղաւոր կամ Մենք այդ չենք կարծում: Բանը նրանումն է, որ 61-րդ յօդուածը չէ իրադրծում և հարիւրերորդ մասը Հայաստանցու այն իսկական պէտքերի ու պահանջների, որոնց ընդարձակ ու լիակատար գործադրութիւնն այսօր նոյն իսկ յայտնվում է անհրաժեշտ 61-րդ յօդուածը մի կիսատ առատ միջոց է, որ (գործածենք այստեղ Ռուս յասանի ճանապարհորդ Ընդիլ Ա. Վ. Ելիսէեւի գեղեցիկ ու ճշմարիտ խօսքը) „Իսկապէս հայերի շրթները միայն չօչափեց, առանց նրանց քաղցը յագեցնելու:” 61-րդ յօդուածն իր գործադրութեան ողջ ընդարձակութեամբ հանդերձ, — եթէ միայն նեղը կարելի է ընդարձակ համարել, — չի վճռի Հայաստանցու և ոչ մի տնտեսական խնդիրը, չի կանոնաւորի նրա սօցիալական դրութեան և ոչ մի կողմը, չի տալ նրան և ոչ մի քաղաքական իրաւունք, մի խօսքով չի իրադրծիլ հէնց այն պահանջները, որոնք իսկապէս կարող են Հայաստանցուն տալ նրա բազմադիմի զարգացման համար հարկաւոր պայմաններ: Կը դա այդպէս է այն պարզ պատճառով, որ 61-րդ յօդուածը բոլորովին անդիտանում է հայ ժողովրդի գոյութեան այդ բուն էական կողմերը: Իսկ ինչ վերաբերում հայ ժողովրդի վրայ կատարվող տեղական արշտոնեաների հարստահարական մէջոցներին և օտար ցեղերի յարձակումներին, կէտեր, որոնց վրա է միակ այն էլ, կարծես, անցողական կերպով զարձրած ուշադրութիւն 61-րդ յօդուածում, — դրանք լոկ երեսակայական արտօնութիւններ են հայ ժողովրդի համար: Դրանցից առաջին կէտը, պաշտօնեաների վերաբերութեամբ, լոկ այն ժամանակ կարող է լրջօրէն կանոնաւորվել, երբ արմատականապէս կանոնաւորվի թիւրք կառավարչական տերոջ սիտուէտը, որը բացի որ և է կանոնաւորութեան, միայն ընդունակ է ստեղծել առաջացնել կառավարչական ամեն տեսակ անկարգութիւններ, կառավարչութիւններ, որոնք իրենց ամբողջ ահագին կշտով ծանրանում են ժողովրդային ընդհարութեան վրայ: Իսկ վերոյիշած երկրորդ կէտը, այլապէս կլինի յարձակումների մասին, մենք կուսենք, որ թիւրք կառավարութեան դրանց դէմ անն-

Արքիեպիսկոպոսի մասին լոկ երևակայելը երազել կարող ենք: Այդպիսի արիւնհարու արշաւանքների երևայթները հայ ժողովրդի դէմ կառավարութեան փայփայած վաղեմի փափագն է, օգուտ է նրա շահերին և դրանց պատճառով էլ ինքն էլ յատնվում է այդպիսի երևոյթների անցնողն ու քաջալիւղը, ինչ մենք տեսել ենք շատ փաստերից: Այդպիսի երևոյթներն ամենախիստ կերպով տկարացնում, ազքատացնում են հայ ժողովրդին, որով այդ վերջինն առաւելապէս դառնում թիւրքի ստրուկը, թիւրքի պարտաւորված կերակրողը:

Ահա թէ ինչ է իրենից ներկայացնում տարաբազու 617 յօդուածը, որն այնչափ խարում ու շուարեցնում է ոչ միայն եւրոպացիներին, այլ և զժրագրաբար, մեզ հայերիս:

Այնուհետև յարգելի հեղինակը շարունակում է իր խօսքը թիւրքաց Հայաստանի աշխարհազորական դիրքի մասին, առով նրան մեծ նշանակութիւն նոյն իսկ եւրոպական ապագայ քաղաքականութեան վերաբերութեամբ և ասում է, որ թիւրքիայի եւրոպական սահմաններն անգաղար նեղանալով և Պոլսի ճակատադիրը վերջնականապէս Փ. Ասիայում կորոչվելու հետեւից յետոյ նա շատ համակրական կերպով խօսում է հայ ազգի ընդունակութիւնների վրայ, խօսում է նրա թշուառութիւնների վրայ, հայ ազգի ու Հայաստանի երեք կտորի պատառված լինելու մասին, հայոց եկեղեցու վրայ և անելով հայերի ժողովրդագրութեանը վերջ է տալիս իր աշխատութեան առաջին մասին:

Իր գրութեան երկրորդ գլխի սկզբից հեղինակը խօսում է Փարիզի 1856 թ. դաշնագրութեան վրայ՝ նա ասում է, որ «հայերը, ինչպէս թիւրքական պետութեան մէջ եղած և ուրիշ քրիստոնեայ ժողովուրդները, սկսած 1856-ից իրաւունք ունէին համարել որ Եւրոպան արդէն դէթ մութ կերպով յայտնվում է երաշխաւոր սուլթանի խօստումների՝ բարենորոգումներ անել իրեն հպատակ քրիստոնեայ ժողովուրդների կացութեան մէջ և որ Եւրոպան արդէն նրանով որ թիւրք պետութեանն ազատեց աւերումից ու քայքայումից, ոչ միայն վաստակեց իրաւունք, այլ պայմանաւորվեցաւ ապահովացնել Հայերին, որպէս և Յոյներին ու Յուդայերին, որ սուլթանի խօստումները կիրաւորվեն»: Եւ փոքրինչ յետոյ հեղինակը շարունակում է. — «Յունիան, Հերցոգովինիան ու Յուդայերիան 1856 թ. դաշնագրութեան մէջ ոչ մի նշանաւոր տեղ չէին բռնում: Երանց անունները մինչև իսկ այնտեղ յիշուած չէր, որպէս և չէր յիշված կրիտի ու Լիբանի անունները: Ինչո՞ւ ուրեմն, — բացականում է հեղինակը, — հէնց 1878 թ. առաջ Եւրոպան այնչափ գործուն կերպով հետաքրքրվեցաւ այդ վայրերի քրիստոնեայ ժողովուրդներով և ինչո՞ւ ոչ մի պահանջ չարեց յօգուտ Հայաստանի քրիստոնեաների: Ի՞ժրազ-

գաբար, այդ հարցին ես լոկ մի բացատրութիւն եմ գտնում. — բանը նրան ու լին է, որ Հայերը փոխարէն ապաստամբելու, բաւականացան լոկ աղերսներով Անկասկած, որ այդ բացատրութիւնը ոչինչ պատիւ չէ բերում եւրոպական դիպլոմատիային, սակայն ուրիշ բացատրութիւն ես չեմ գտնում: Իսկապէս Հայաստանի քրիստոնեաները (և մեծ պետութիւնները չէին կարող դա չգիտնալ) թիւրքական ղեկավար տակ նոյնչափ վերաւորված, անպատված էին և 1878 թ.ից առաջ, ինչպէս Յունիայիները, Հերցոգովինիաներն ու Յուդայերները: Որպէս այս վերջինները, նրանք էլ, հակառակ սուլթանի հրովարտականների (Tanzimat, firman), միշտ ենթակայ էին քմահաճոյ հարկածողութիւնների. կատարչական պաշտօնեաների քմահաճոյքից ու ապօրինական վարմունքներից, դատաւորների լիախութիւնից ու սպիտութիւնից, առաջինների և այս վերջինների ատելութիւնից — ոչնչից պաշտպանված չէին ոչ հայ անձերը և ոչ նրանց կայքերը: Այս բոլոր աղետների վրայ մասնաւորապէս հայերի համար աւելացրէք և քիւրդ բէկերի բռնութիւններն ու թափառաջրիկ Չէքքէզիների ու Քիւրդերի զագանութիւնները»:

Չնայած նրան, որ հայերը նոյն աղետաբեր գրութեան մէջ էին վերջին ուսուլթիւրքական պատերազմից առաջ որպէս և Յունիայիները, Յուդայերները, Հերցոգովինիաները, չնայած նրան, որ հայերի գրութիւնը ևս առաւել վատթար էր չնորձով բարբարոսների յարձակումների, որոնց հետքերը լինում էին հայ գիւլերի ու շինարար աւերումների, այնչափ կատարումն էր ու վայրենութիւնները — այդուամենայնիւ այն խորիկ ժողովուրդների մէջ այնչափ վատ էր հայրենա սիրական հուրն ու ազգային պատասճանաչութիւնը, որ նրանք անտանելի գտան իրենց թշուառութիւնները և շինայեցին նոյն իսկ իրենց արիւնք թիւրքի փտած ու կործանիչ ղեկավար փրկվելու համար: Եւ երբ այդ ժողովուրդների գործիչները հիմնում էին յեղափոխական ընկերութիւններ, գրգուռ ժողովրդին ապստամբութիւն անել գործածում ամեն սեռակ ըստ պատճառան միջոցներ կառավարութեան դէմ, երբ այդ ժողովուրդները խուսն ու զայրացած ամբոխներով, ոտի կանգնած, ստրկական ծանրագին շղթաները շարժելով, ճիգ էին թափում փշրել նրանց, երբ նրանց յեղափոխականները, լի հաւատով դէպի իրենց սուրբ գործի ճամբարութիւնը, կրելով այնքան զրկանք ու նահատակութիւն և ընկնելով թիւրքի խորունկ բռնտերը, համարձակ կերպով ու հպարտ ճակատով և ազատութիւն խօսքը շրթներում՝ բարձրանում էին թիւրքի անարգ կախաղանը և այդպիսով քաջաբար ոչնչանում ամբողջ լէգիոններ, — այդ ժամանակ մենք, հայերս, զողողալով թագնվում էինք մեր թշուառ ու նեղ բոյներում և չհամարձակվելով աչք զցել մարդկութեան վրայ չբեղապէս փայլող ազատութեան արևի վրան, մեր սոկրայած ու զողող ձեռների մէջ սեղ-

մերով թղթի կտոր աղերսագիր, կարկառում էինք նը բան գոտոզ կարողային... Իսկ այսօր, երբ մեր գըրութիւնը 1878 թ. ժամանակներից ամենայն տեսակէտից, ամենայն կողմից ևս առաւել վատթարացել է, — միթէ մենք այսօր ևս նոյն խոնարհութիւնը, համբերողութիւնն ու վախկոտութիւնը ցոյց կտանք, ինչպէս 1876 թ., որ ամօթից ու քայքայումից զատ, ոչինչ չի բերել հայի գլխին: Միթէ մենք այսօր ևս, երբ մեր գրութեան բոլոր ազէտներն օրից օր առաւել անուժ են, օրից օր առաւել ծծում մեր կենդանութեան հիւթը, օրից օր առաւել խեղդում մեզ ստրկութեան նկիւտած ճահճում և երբ օտարն է մեզ ցոյց տալիս մեր անելիքը, — միթէ այսօր ևս մենք չենք տեսնում, որ հասել է ժամանակը, երբ օրինակ ունենալով ուրիշ ժողովուրդների զործերը, մենք էլ պիտի իմանանք մեր անհրաժեշտ պարտականութիւնը դէպի հեծեծող հայ ժողովուրդը: Ահա, և ամենայնանհալ գերին, որ անխիղճ, տաժամակիր շարչարանքից ջարթված ընկած է գետնի վրան, մահուան վախի սարսուռից նա էլ իսկ կորցնում է իւր արդէն չափազանց մեծ համբերութիւնը և, ինչպէս փոթորիկը ծովում, մրրկում են նրա կրծքում հանգստի ու սպասութեան զգացումները: Եւ ինչ, այդ ժամանակ գերին պատրաստ է կամ մեռնել և կամ ապրել իբրև մարդ... Միթէ այդ գերիից էլ մենք ցածր ենք.....

Այնուհետև Բօլէն Ժեկմէնը շարունակում է իր խօսքը, գամնալով դէպի «Հայոց ազգային Մահամարութեան» քննութեանը:

«Կանգնենք փոքր ինչ այդ տխուր փայլ — ուսում է հեղինակը. — նա շատ մեծահնչիւն է երևում. ծրագրիւր կամ կանոնագրութիւնն հայոց հասարակութեան անունն աւելի համապատասխան կլինէր նրան, սրն ուրիշ ո՛չ մի կէտի չէ հանդում, եթէ ոչ միայն կողմակերպել մի տեսակ կէտ քաղաքային ու կէտ կրօնական ընկերութիւն, որի իրաւունքներն իսկապէս վերջանում են հենց այնտեղ, որտեղից սկսվում է մէկ իսկական կառավարութեան իրաւունքները: Կա պատրաստ եմ հաւատալ, որ այդպիսի փրօնն ու խարուսիկ տխուրը հեռանք չէ մի սրբազ սխալի: Թիւրք կառավարութիւնը զա վաւերացնելով, հաւատարիմ է մնացել իր սխալմին, որը կույանում է զեղեցիկ է տիկէտներ (e'tiquetes) գրելու մէջ, ինչպէս սահմանադրութիւն, բէֆօրմներ և այլն, դատարկ արկիւնների վրայ: Իրենց կողմից Կ. Պօլսի հայերը, որոնք կազմել են այդ «ազգային Մահամարութիւնը», այնքան էլ չեն զայցել խարխել ու երազել միայն նրա իսկական նշանակութեան վերաբերութեամբ: Այդ կարծիքն առաւել ևս հաստատվում է իմ մէջ և այն պատճառով, որ այդ ամբողջ տեսակում նկատվում է նոյնպիսի անհամեմատութիւն խօսքերի և իրերի մէջ: Բնտ երևոյթին այդ 250 յօդուածները կազմում են մէկ ամբողջ սահմանադրական քննութիւն:

զեղեցիկ առաջարկներ՝ հիմնաւոր սկզբունքներով կեւործնական ու դաւառական վարչութիւն, ազգային ներկայացուցիչների տեղական ժողովներ, առաջնորդական ու թաղական ներկայացուցիչների տեղական ժողովներ, ազգային խորհուրդներ, որոնց վրայ ստանձնված են հեռեհալ պաշտօնները՝ ժողովրդական լուսաւորութեան, վարչական (administratif), գրամական ու արդարագատութեան, կարգադրութիւններ ընտրողութեան և ընտրվողների իրաւունքների մասին, ընտրողութեան կերպերը, կարգապահութեան մասին ժողովներում, մինչև իսկ սահմանադրութեան վերաբնութեան ձևն ու կերպը... Վերջապէս ամեն բան կայ այնտեղ, ամեն բան, բացի մի յօդուածի, որով զէթ մի հայ իրաւունք ունենար արգելել Քիւրդին վերջնել նրա ոչ խարները, արգելել բէյին բանաբարել նրա ազգիան և զողմնալ նրա հողը, արգելել հարկը ժողովուրդին կըրկ նապատիկ, եռապատիկ անգամ չվերջնել մի և նոյն արդէն մեծ հարկը. ամեն բան կայ, բացի մէկ իրաւունքից, որը ծառայէր թիւրք կառավարութեան քուսհաճոյրը: զսպելու ասեճի տեղ, որը գարծնել տար թիւրքի ուշադրութիւնը ժողովրդի թուատութեան վրայ: Բերիւ խօսքով ո՛չ մէկի մէջ չէ և բեւում լուրջ երաշխուրդութիւնն ո՛չ ազգի ընդհանուր իրաւունքներին, ո՛չ նրա անդամներին անհատական իրաւունքներին: Մի բան ևս, որ աչքի է ընկնում այդ «Մահամարութեան» մէջ, — շարունակում է հեղինակը, — զա այն է, հակառակ իր սամկապետական ու ներկայացուցչական սկզբունքների զծագրութեան, նրա զլուսաւոր նպատակն է, կարծես, կազմել ներկայացուցչութիւն Կ. Պօլսի Հայերի Արդարեւ, ազգային ընդհանուր ժողովի ընտրվող 220 անդամներից՝ 160-ը ընտրվում են Կ. Պօլսի թաղերի եղեղեցիներով, մինչդեռ ամբողջ եւրոպական թիւրքիայում կայ ընդամենը 400,000 Հայ, այն ինչ աւիական թիւրքիայում ամենաազակաւոր կայ 2,600,000 Հայ»:

Այդ զեղեցիկ քննադատութիւնն անելուց յետոյ, յարգելի հեղինակը մատնանիլ է անում և այն կէտի վրայ, որ «Իսկական Հայաստանի, այսինքն այն վայրերի, որ հայ բնակութիւնն ամենից խիտ է, գաւառական ներկայացուցիչները սատարիկ փոքրամասնութիւն են կազմում»: յետոյ նա երկարօրէն քննում է «Մահամարութեան» շատ կէտերն առանձնապէս, որ, դժբաղդարար, երկար կտե է այստեղ մի մի առաջ բերելը, և ի վերջոյ ասում է, որ «Մահամարութեամբ» հայերը միայն մէկ իրաւունք ստացան, այն է՝ խնդիրներ գրելու, ազբաներ, բայց իսկապէս զրանց զրութիւնը ոչինչով չկերպարանափոխվեցաւ, «իրաւունք ստացան իրենց ձայնը լսեցնելու սպառ միայն, բայց ոչ արդարութեամբ վայելելու»:

Ահա այդ իրաւունքի շորհով ասում է հեղինակը, հա յերը կազմեցին 1871 և 76 թ. թ. յանձնաժողովները Հայաստանի Հայերի կայութիւնը քննելու համար և վերջրն իրենց արդիւնքը ներկայացրին Բ. Ղրան: Կա բրննում է այդ յանձնաժողովների տեսակին, առաջ բերելով

այնտեղ ներկայացրած մի քանի օպերայի անցքերը և ա նու անելով այդ տեսքովը «ժողովրդի տերությունը ու ցան կութիւնների տեսքով» որ յանձնակցութիւնը կտաւ վարութեան զամբիւղների խիտ փոշին — ասում է հետեւեալը. «1876 թ. յանձնած ողովի տեսքակին նույն լով տեղական բռնութիւնները, չգիտնելով ոչ սանձ, ոչ օրէնք, չեն մասնաւորվում լով այս համայնքի կամ այն շէնի համար իբրև օրհասական հետեւանք թուլութեան ու անբարոյականութեան, որ թագաւորում են կառավար շական մարմինների վերին կարգերում, այդ բռնութիւն ները գոյութիւն ունեն ամբողջ Հայաստանում (Բռնութիւնների ամենատիրական կերպերից մէկն է հայ զիւղացիների հողերի յախշոակութիւնը, մինչդեռ այդ հողերը դեռ շատ հին ժամանակներից պատկանում են զիւղացիներին, որոնք նրանց դարձրել են պողատու իրենց քրտինքով: Հակառակ ըէֆոմներ ներմուծելու հրամանագրիներին, քիւրդ բէկերը և թիւրք աղաները (և թիւրք կառավարութիւնը) միշտ օգտվում են քրիստոնեայ ընակիչների դաշտերով, այգիներով, արտերով, զրանց համարում են իբր իրենց սեփականութիւն, վարվում են զիւղացիների հետ, իբրև ճորտերի, և նրանցից յափշտակում են, ստեղծածով նրանց աշխատանքի գծում արդիւնքը: Կրա հետեւանքն այն է լինում, որ շատ անգամ զիւղացին պարտաւորված է լինում թողնել իր ընտանիքը, իր արտերը, կայքը, Կ. Պոլսի կամ ուրի տեղ գալթիւն նպատակով և որ այնքան գերդաստաններ, զբրկված իրենց միակ պահպանողներից, զոհվում են յուսահատութեան»

Այդ ճշգրիտ պատկերը նկարագրելուց փոքրինչ վերջ, հեղինակը տալիս է հետեւեալ հարցերը. — «Արդարութիւնը, որ պատաներում լով խօսքով գոյութիւն ունի, արդեօք Կ. Պոլսում նա ունի իսկական գոյութիւն: Արդեօք կարելի է, զործածելով բոլոր օրինական կանոնները, գիժել պետութեան առաջնակարգ հեղինակաւոր անձերին և յուսալ, որ ճշմարիտ իրաւունքը վերջապէս կունենայ յաղթանակը»:

«Այ՛» — ահա հեղինակի պատասխանն այդ հարցերին: Աշարունակվել է.

**ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԸ**

Ընդհանուր հայեացք գցելով այն բոլոր անցքերի վրայ, որ մեր կեանքում իրար ետեւից յաճորդեցին վերջին տանի ընթացքում, մի միտք, մի եզրակացութիւն յամուտարող հայրածում է մարդուն: Այդ եզրակացութիւնը հետեւանք է. հայն այնչափ ծեծված, սարկացած է որ երբ նրա ստղե կը նու մեն բարեյաջող հանգամանքներ հայ ժողովրդի կաշտութեան կերպերը բարեփոխելու համար զործելու, էրբ իրերի գրութիւնը նրան պատեհ առիթ է տալիս, թիւրք կառավարութեան հայրածումների գէժ բողոքելու ու ջատագովելու, — հայն այդուամենայնիւ զուրկ է լինում բառական յոժից յաղթելու իր երկշտութիւնը, իր սարկական ոգին և նախամեծար և համարում ընդարձակ դաշտի վրայ նայելու

անխօս, անհամարձակ մնալ, որչափ և իր ստորեայ կեանքի բռնութուն հայի այդ սարկական ընազդու մեներն ու սովորութիւնները, միակ պտուղները որ նա վատասել է սարկավորանայեանների բռնեցքի տակ, թիւրքին շոգորթութում ու երես են տալիս: Թիւրքը չէ կորոզանում թագցնել այն ժահրոտ ու հեզնական քմծիճաղը, որ ահամայ ծագում է իր բրթի տակին: Կամեղ յիշեցնում է բանաստեղծի այն սարկբը.

«Շղթաները սարկի ոտից հանեցին .  
 Ահ, վերջապէս կատարվեցաւ նրա երազ . . .  
 Բեր ու գում ես գնալ հիմա, նրան սասցիս .  
 Այստեհետե զու ազատ ես և անվնաս  
 Բայց թըշուարն արդէն վաղուց էր սովոր  
 Իր սաները շղթայակապ լով քարը տալ,  
 Եւ թէպէտ նա այժմ ազատ էր, բայց արձակ  
 Բւ աներկիւզ չէր կարնում էլ ման գալ  
 Եւ տեսնելով նրա շարժումներում բանի ջանք, —  
 Թէն շղթայ չըկար կախված նրա ոտից, —  
 Նրա գոռ տէրրն ունէր ծիծաղ ու բերեքանք

«Սարկի խոնարհ զընայքից»

Եւ սուլթանն իրաւունք ունի ծիծաղելու հայի վրայ: Այն ժամանակ, երբ շորս անուանի հայերը մեծփիղիի միջոցով մտթ ու քողարկված լիզուով յայտնեցին սուլթանին, որ հայերը զժգոհ են կառավարութիւնից նրա բրունաւոր ու քմահաճոյ գործողութիւնների պատճառով, թըւում էր, որ այդ փոքր իշատէ բայարձակ խօսքից յետոյ մեր ազգային ներկայացուցիչները կհետեւեն նրանց գծած շահով: Հայ ժողովուրդն այդ սպաքում էր և իրաւունք ունէր սպասելու: Բայց արդարացա՛ն արդեօք ժողովրդի յոյսերը: Ենք այդ հիմա կտեսնենք:

Չորս անուանի հայերի հետ մեծ-կարգաբար ունեցած տեսակցութիւնից յետոյ՝ սուլթանը չգայցաւ ձեւայնել որ իբր ինքը մտածում է հայ ժողովրդի բարօրութեան մասին, խօստացաւ իրերի գրութիւնը ներկայացնել մասնաւոր յանձնած ողովի քննութեան և ի վերջոյ զոհացում տալ հայ յերին: Բայց այդ «աջնուական զգայութեանը» զոյց աւարով հանդերձ՝ սուլթանը սկսաւ կատարի խոզարկութիւններ զործագրել տալ վանի և զրա չըջակայ զիւղերի մասնաւոր տներում, եկեղեցիներում, տակն ու վրայ անելով խաբաններ ու ամեն բան. զէնք, վատթի և այլն գանելու յուսով: Կառավարութիւնը մի բուպէ կարծեց որ իր գէժ պատրաստուող գաղանի գաւտըրութեան հետքերի վրայ է ընկեր: Չըբան կից ձերբակալութիւններ ձերբակալութիւնների ետեւից կատարվում էին վանում և ու իշ տեղերում: Երբ ժամանակ երազական լրագիրներում լըր տալիցաւ թէ, եկեղեցիները խոզարկելից իբր 200 հայ կախ են ունեցել խոզարկիչ ստեփանութեան հետ. երկու կողմից էլ մի քանի սպանվածներ են եղել և մեա 45 հայ ձերբակալվել են: Թըւում էր, բուպէն ստեղծել է ու ժողովուրդ, հաստո, հոգեւրականութիւն, ազգային վարտութիւններ, եկեղեցիներ, — բոլորը մի քանի օրուայ ընթացքում կոխկրտվեցան սուլթանի սաներով, բոլորը գաբձան զոհ թիւրքի վայրարարսյ ու զիւրազգայ կատկածիւ կատարարութիւնը Հայաստանի անկիւններում տակուն կերպով վնասում էր գաղանի յի պափախական ընկերութիւններ, այդ իսկ թճաւի մի հատաստ.

բայցին նշանակում իրր գրաքննիչ Արտաբեկու Թուրքիայի Հայ Հրատարակութիւնները քննելու համար . Քաղ՝ Ժողովի ընտրութիւնները թողնում անվաւեր պատրիարքից պահանջում զանազան հարցումների պատասխան փակում Հայոց գաղտնիքը և այլն Այդ անգուստ հալածումների առիթով անդիական դեպքեր մի քանի անգամ դիմեց կատարութեան՝ բացատրութիւն պահանջելով նրա գործողութիւնների մասին և բոլոր հարկաւոր տեղեկութիւնները վերցնելով . . . Բայց այդպիսի տագնապալի ժամանակ ինչ էին անում Հայ ժողովրդի ներկայացուցիչները : Նրանք «խոհեմ ու սպասող» գիրք էին ընդունել : Այդպիսի ժամանակ, երբ ուղղամտութիւն, համարձակութիւն պիտի ցոյց տային նրանք կատարութեան դիմաց երբ Հայ ժողովրդի պահանջները և նրա խոհական գրութիւնը պէտք է ներկայացնէին կատարութեան, — նրանք բաւականացան այն ծագելի կատակերգութեամբ, որ խաղում էին Յարութիւնըն ու սուլթանը նրանք չկարողացան մի բռնի հրամարվել իրենց ստրկական «խոհեմութիւնից», և շտապեցին պատրիարքի շրթներով յայտնել, որ Հայ ժողովուրդը մի ազն է թիւրքիայից և մի ա նրա նոյն հաստարիմ, երկչոտ, խոնարհ ծառան է : Մեր օրինակելի պատրիարքի այդ վայրենի յայտարարութիւնն իրեն հիմք ունեցաւ «Հնչակը», որն իր կողմից սուլթանին յայտնում է բողբոլին տարբեր գաղտնիքներ . . . Ի՞նչ սուլթանն անընդունակ է լսելու իրենից շատ ցածր գտնված Հայ ժողովրդի յուսահատ ողբն ու ձիւշը, այդ գեռ չէ նշանակում, որ ազատ խօսքն էլ նրա շրթից պայտառի հաստ ու ամուր պատերի միջով չի անցնիլ և չի որոտալ նրա ականջին : Սուլթանին, այդ «հիւանդ մադ գուն», «Հնչակը», ինչպէս առում է մի Հայ չարախախտութիւն, սաստիկ «չիտիւն և վրդովել է» . աղատ խօսքի բժշկութեան գեղը շատ գտան է թել իրեն : Եւ իր հրո հարատակին (այսինքն մեր պատրիարքին) հրամայել է մնալու Հայ ազատ խօսքի գտան գեղի գէմ և փոխարէն ապ իրեն քաղցր կլօրիկ գեղեր, սրնք սուլթանին անհամեմատ աւելի փոքրիկ էին : Յարութիւնն, իր սովորութեան համեմատ, չուչացաւ հրատարակել մի շրջաբերական մեղ ու մեղ նմանների գէմ ուղղա՞ծ : Այդ շրջաբերականը սկսում է այսպէս . «Այս օրերս օտար երկրի մէջ հրատարակեալ գրք գոյթ թերթ մը տեսնուած է Հայերէն լեզուով, որոյ բնիւր բունքներն և պարունակութիւնը գլխաւորաբար կհակառակին Հայոց ազգին առ օսմանեան պետութիւնն ունեցած դաբար Հաստարիւթեան զգացմանց և օտար են բոլորովին ( )» : Պատրիարքն այդ շրջաբերականում խնկարկելով սուլթանին՝ բոլոր տեղերի Հայ հոգե որակներ թեան պատվիրում է հետեւել իր օրինակին, այսինքն կարգալ : բր ջարեարականը եկեղեցիներում, պատարագին անկճքներ ու նցովներ տեղալ «Հնչակի» և Հայ ճշմարտախօսների գլխին և մի և նոյն ժամանակ օրհնել ու փառաբանել «օգտաւոր փառ կայսրին», ու աղօթել նրա կեանքի երկարատեութեան համար et tuti quanti . . .

Այդ շրջաբերական-կլօրիկ քաղցր գեղը սուլթանն արարում էր կուլ առեց, բայց արգիւթ նա գրանում գաղտնեցրած Հայ ժողովրդի սաստիկ գժգահութիւնը և դրա առջապայտութիւնները, այն է՝ յեղափոխական տէնդէն

ցիան, որ արագաբար ածում է Հայերի մէջ : Ղաւ անընախան կլինէր : Այլ ընդհակառակը՝ սուլթանի չիտիւթութիւնն ու վրդովումը թիւրք կատարութեան տարութեան ու վախի ականքը նշանն էրն են, որ Հայերին առաւել ոյժ կը տան իրենց յեղափոխական ձեռնարկներում : Ճշմարտն այն է, որ քաղցր կլօրիկ գեղը սուլթանի սաստիկ վրդովումը փոքր ինչ հանդարտեցնելով ընդհակառակը շատ դառն գեղ յայտնվեցաւ : Ճշմարտ Հայերի համար : Այս եթէ Յարութիւնն իր շրջաբերականի շնորհով արժանացաւ սուլթանի գահի օտը համբուրելուն, բայց միս կողմից հայը նրա անուան կցորդեց «թիւրքաձօլ և ազգամիտ», ածականները : Այս պատրիարքն իր հաստարիւթ հպատակութեան զգացումների տարօրինակ արտայայտութեամբ մի թէ ոչնչացրեց մեղ ու մեղ նմաններին, միթէ կողքեց «Հնչակի», նշանակութիւնը : Չենք կարծում բողբոլին, սրովհետեւ շրջաբերականի հրատարակութիւնից յետոյ «Հնչակը», ըսկառ աւելի պահանջվել ու տարածվել և համակրական ցոյցերի ստարկայ գառնար թող սուլթանը, Յարութիւնը և իրենց արբանեակները երբէք չմոռանան այս առաժը — «Հայածել տարածել» :

Յարութիւնը շրաականացաւ լոկ շրջաբերականով, նա ուղեց աւելի գեղեցիկ դեր խաղալ իր և սուլթանի ըսկառ կատակերգութեան մէջ : Ազգային Ժողովն արդէն ընդունել էր նրա հրամարականը, իսկ սուլթանը, օգտվելով իր veto ունենալու իրաւունքից, սնդում էր Յարութիւնին չհրամարվել իր պաշտօնից (ինչ անհասկանալի չէ : Այդպիսով Յարութիւնն ընկած էր երկու կրակի մէջ աւղը . մի կողմից ազգը գահ էր նրան տեսնել հեռացած պատրիարքական աթոռից, միս կողմից Յարութիւնը չգտաւ իր մէջ բաւական գորութիւն ընդդիմադրելու սուլթանի ցանկութեան և պատրիարքութեան հրապարչին «Կլինել, թէ չլինել») : Համկէտի խորիմատ տարակուսանքը Յարութիւնի գլխում փոխվեցաւ տարօրինակ տրամարանութեան : «Այս լինել, և չլինել» իմաստուն կերպով վճռեց Հայոց պատրիարքը : Է այնուհետ պատրիարքական շործերն իր ձեռից բաց չթողաւ և մի և նոյն ժամանակն էլ պատրիարքան ու նից խոստ ինչու փախաղ սկսաւ ցոյց տալ . . . Բայց միթէ, արդարեւ, իր տարօրինակ փառամտութեամբ նա կարծում է, որ ինքն այնքան անհրաժեշտ է ազգային գործերը ղեկավարելու համար : Եթէ նա կարծում է, որ անցեալ ամուսայ սկիզբները կատարութեան առջև իր բնած ընթացքն այնչափ հեղինակաւ որ դարձրեց իր անձին, որ ազգը նրա վերագարձը գրկարաց ու սրտհեռաութեամբ կընդունէ : Այն նա այդ չէ կարծում : Այլ պատրիարքական աթոռից նա կարճած է անցալ կապերով, որ մեզ հասալակ մոշ կանացուների՝ աննկատելի է . . . Այս նա այդպէս մնում է և պատրիարք, և չպատրիարք : Այս ինչ փոյթ, եթէ նրա շրջաբերականը ազգային գործերը խառնափնդոր վիճակի են են թարկիւմ մի Հայ հարստաշարված ու անարատալան գիւղացին իր խրճիթի մէջ անքում ու արանձում : Ինչ փոյթ, եթէ նրա շնորհով Հայ հոգե որակներն ու աշխարհականներն ամբողջներով շղթայակալ վարում իրենց թշուառ կեանքը թիւրքի անագարցի բանտերում, եկեղեցիները սակն ու վրայ անվում . . . Այլ Յարութիւնը, իր նշան ստրկական հր

պատակութեան, շտապում է դողդոջուն ձեռներով հայ ժողովրդին բերել դեմ սուլթանի ոտների տակ, որ նա մի շողքորթ խօսք ուղղելով հայերին, հարիւր անգամ ոտով կոխէ հայի գլուխն ու սիրտը...

Քաղ. ու Կրօն. Ժողովները որոշում են թ ա ք ը ի ր ուղղել Յ. Գրան, բացատրութիւն պահանջելով կառավարութիւնից և բողոքելով նրա դէմ Վանի և ուրիշ տեղերի կատարի խուզարկութիւնների մասին, այնքան ձերբակալութիւնների, դպրոցների փակման մասին և այլն: Բայց ինչ. Չ յունվարի նիստում այդ երկու Ժողովներն էլ անգի կանում են, որ Յարութիւնն ու Քաղ. Ժողովի նախագահ Միսն րէյ Մագսուտն աւելորդ են համարել այդ որոշումը կատարել, պատճառաբանելով թէ՛ ներկայ պարագաներում (՝ պիտի «խոհեմութիւն ու խնարհութիւն», ցոյց տալ դէպի կառավարութիւնը և «չգրգռել», նրան: Յարութիւնի հանձնարեց պատճառաբանութիւնը լսելով Ք. Ժողովի հարեցաւ ու խորին կերպով գլուխ տուեց սուլթանին: Կրօն. Ժողովը նախ իրեն յայտնեց անհամաձայն պատրիարքի հետ: Բայց աւանդ, նրա զխում ծագեցան տարակուսանքներ, որ եթէ ինքն ընդդիմադրելու լինի Ք. Ժողովին՝ իրր դրանից ազգի մէջ երկպառակութիւններ կծագեն, թէ իրեն՝ Կ. Ժողովին կառավարութեան առջև կամբաստանեն իրր նա մտադրութիւն ունի ազգի և պետութեան մէջ անհարգութիւններ սերմանելու և այլն...

Մենք նախ ուզում ենք մատնանիչ անել այն տարորինակ երևոյթը, որ խառն Ժողովի որոշումը մէկ կերպու անձ կարող են չկատարել՝ անձնական կամքով և բացի դրանից դեռ թ Ժողովն էլ կարողանում է համր կերպով խոնարհել մէկ անձի առջև, որի թուրութիւններն իրեն քաջ յայտնի են: Այդ ինչ նախապետական յարաբերութիւններ. . . Երկրորդ Կ. Ժողովի պատճառաբանութիւնները, որոնց զօրութեամբ ինքն իրեն կամաւոր լուծեան է մատնում, նախապալումներ լինելով հանդերձ ինքն ըստ ինքեան անգոյն են սեփական ժողովրդի ու եկեղեցու շահերի հանդէպ: Այդպիսի հանգամանքում թ Ժողովին ամենից առաջ պէտք է զեկաւարէր մէկ ուրիշ զգացում, մէկ ուրիշ միտք, այսինքն իրենց սուրբ պարտականութիւնը դէպի հարազատ ժողովուրդը որի ներկայացուցիչներն են իրենք: . . Բունը նրանումն է, որ հայերի այդ «խոհեմ», քաղաքականութիւնը յայտնվում է յօգուտ թիւրքի շահերի: Չի պիտի խաբվել որ այդ քաղաքականութեամբ հայ ժողովուրդը փրկվում է թիւրքի հարուածներից և մշտական աղէտներից, այլ ընդհակառակը՝ նա մեր լեզուն էլ է համարացնում: Հազիւ համրերելուց յոգնած ժողովուրդը սիրտ է առնում բարձրացնել իր գլուխը, հազիւ մեր լեզուն սկսում է բացարձակաբար շարժվել ժողովրդի շահերը պաշտպանելով, — թիւրքի մի բռնաւոր արարքը, սուլթանի մի շողքորթ խօսքը մեզ զրկում են մեր բոլոր կարողութիւնից ու համարձակութիւնից և դեռ մի քաղէ առաջ ազատ կամբի տէր մենք կրկին յօժարակամ ընկնում ենք թիւրքի սրագայթը: Այնպիսի հանգամանքում մենք լրջօրէն շենք մտածում կառավարութեան առջև մեր բռնելիք դիւրի մասին, վախենում ենք, դողում ենք նրանից, սկսում անել զիջումներ զիջումների կտակից և վերջապէս համոզում այն կէ-

տին, որ մեզ անհնար է լինում պահանջներ անել թիւրքից և դրա փոխարէն ինքը թիւրքն է յայտնվում մեզնից պահանջողը և գոռոզութեամբ կանչում է մեզ տալ հլու հպատակութեան երգում: . . Արկնում ենք, մեր զիջումները դառնում են կառավարութեան ոյժն ու յաղթանակը:

Կարգացէ՛ք թիւրք կառավարութեան վերջին շրջաբերականը և դարձեալ նոր գօրեղ փաստ կդանէք մեր կարծիքի հաստատման համար: Կարգացէ՛ք այն եզուխտական ու ստախօս լեզուն, որ գործածում է նա Եւրոպայի առջև: Կարգացէ՛ք այն հեղնական տողերը, որոնք շատ վատ են թաղցնում թիւրքի մեծ ուրախութիւնը, որ դատարկ խոստումներով նրան աջողեցաւ կուրացնել հայերի աչքերը, նրանց ստիպել աւելի ստրուկ հանդիսանալ: «Պատրիարքը նախ չէր ուզում հրատարակել իր շրջաբերականը, — ասում է մի սուսաց լնադիր — բայց մեծ կարգուսը սնդից այդ բանի վրայ, խոստանալով վերջացնել այն ամեն գործերը, որոնք դեռ մնում են անլուծելի պատրիարքի և Յ. Գրան մէջ, եթէ պատրիարքը պաշտպանէ թիւրք կառավարութեանը», Եւ Յարութիւնը միամտութեամբ ու խոնարհութեամբ հետեւեց թշնամու խորհրդին՝ իբր «խոհեմ», քաղաքականութիւն բանեցնում լինի ինքը և ինչ իրական օգուտ մեզ բերաւ դրանով: նա ջերմ կերպով պաշտանեց կառավարութեան, ազօթեց սուլթանի կեանքի համար, անիծեց հայ ճամբատխօսներին, ոտնակոխ արաւ հայ ժողովրդի շահերը, կուսցաւ, ստախոսացաւ, բայց այդ ամենի համար սուլթանի խոստումների զօրծաղրութեանն արժանացաւ արդեօք... Ինչ վիրաւարիչ հեղնութիւն. թիւրքը մեր ձեռքով մեր հունձն է իւրացնում...

— Որովհետև և Ռուսիայից և թիւրքիայից մեզ ուղարկած ծրարները շեն ոտացվում մեր հասցէները ոտտիկաւ նախեանը յայտնի լինելու պատճառով, ուստի ներքև դիտելով հասցէները մնում են բոլոր միւս երկիրների համար, բացի վերոյիցած երկու երկիրներից: Թիւրքիայում և Ռուսիայում գտնվող այն անձերը, որոնք իմբազրութեանս հետ ունեն անմիջական կապ կատանան մեզնից յատուկ հասցէ, իսկ միւսներն առայժմ՝ ծրարներ կարող են ուղղել Եւրոպա մասնաւոր հաստատմանօթներին՝ խմբադրութեանս հասցնելու համար:

— Տեղի սղութեան պատճառով այս համարուր «Քաղաքական ձերբակալութիւններ թ. Հայաստանում», չէ կարող տպագրվել:

— «Նշակի» տոննձին համարի գինն է 50 սանտիմ կամ 20 կօպ, բացի ճանապարհածախախց: Կարելի է ուղարկել փոստային մարկաներով:

— Յօդուածներ, թղթակցութիւններ և տեղեկութիւններ ուղարկել հետեւեալ հասցեով:

Montpellier. (France). — M. Beniard. Poste restante (No25).  
Իսկ գրամ ուղարկել.  
Bale. (Suisse). — M. Daniel. Poste restante.

Լօնդոն. Հայկական ազատ տպարան